



“ՓՈՂ ՏՈՒՔ ԲԱՆԻ ՏՂՈՅՑ ՈՐ ԻՆՏԵ ԳՆԷ.” ԳՈՒԿ. ԵԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1896

ԹԻՒ 10



ԹԱՓՓՈՂ ՏԵՐԵՆԵՐԸ

ԹԱՓՓՓՈՂ ՏԵՐԵՆՆԵՐԸ

Տարուան ամէն մէկ եղանակը իր յատուկ գեղեցկութիւնն ունի, և չենք կրնար բնել թէ տարուան այսինչ ամսուան մէջ երկիրս զուրկ է հրապուրիչ հանգամանքներէ: Սաղմոսերգուն կ'ըսէ, «Սմառը ու ձմեռը դուն ստեղծեցիր»: Եթէ ամառուան ծաղիկները և կանաչութիւնը աւելի աչքի կը զարնեն, տակաւին գեղեցկութիւն մը կայ ձմեռուան մէջ երբ մրափող դաշտերը կը ծածկուին իրենց ճերմակ վերարկուով, և այս գեղեցկութիւնը, ճիշդ միւսին պէս, կը յիշեցնէ մեզի ամէն բաներն ստեղծող և կառավարող Էակին իմաստութիւնը և բարութիւնը: Առաջին երեսի պատկերը կը ցուցնէ աշնան գեղեցկութիւններէն մասմը: Յաւ կու տայ մեզի դիտել ինկող տերևները, վասն զի մեզի կը յիշեցնեն թէ մենք ալ կը թռումնք և կը չորնանք անոնց պէս: Միայն սա տարբերութիւնը կայ որ մեր ամառը անոնցինէն քիչ մը աւելի երկայն է: Բայց եթէ աւելի խորունկ խորհինք, այս թափթփող տերևները չեն խօսիր մեզի մահուան վրայ, այլ քունի վրայ: Ծառերը մինչ լերկ և անկեղան կ'երևին, միայն քանի մը ամրաներ կը հանգչին, և յետոյ նորէն կը հազուին գեղեցիկ կանաչութիւնով: Այսպէս մենք ալ միայն պիտի քնանանք, և երբ յարութեան փողը հնչէ թէ յախտենական դարնան եղանակը հասած է, պիտի ելլենք և կենաց նորոգութեան մէջ պիտի մտնենք:

ՍՍԱԽՍՍ ԼԵՁՈՒ

Պատմութիւն մը լուծած է հին Ժամանակուան ծառայի մը վրայով որուն առաջարկուեցաւ որ իր տիրոջ և անոր հիւրերուն համար շուկային մէջ գտնուած ամենէն պատուական ճաշը պատրաստէ: Ծառան եփուած լեզուներ բերաւ սեղանը, և երբ սեղանն ստողները կ'ուտէին և կը զարմանային ծառային ըրած ընտրութեանը վրայ, ծառան կը խօսէր այն աղէկ բաներուն վրայով զորոնք լեզուն կարող է ընել, թէ ինչպէս կրնայ փառաբանել զՍատուած և օրհնել զմարդիկ, հրահանգել, դիւթել, հմայել և բարձրացնել մարդկութիւնը: Այնուհետև անոր առաջարկուեցաւ ամենէն գէշ ճաշը պատրաստել հետեւեալ օրուան համար: Ծառան նորէն լեզուներ բերաւ սեղանը: Երբ հարցուցին թէ ինչու լեզուն ընտրած էր, սկսաւ խօսիլ այն չարիքներուն վրայ որ յա-

ռաջ կու գան լեզուին գէշ զործածութենէն: Սաղմոսերգուն լեզուն կը կոչէ իր «փառքը» կ'ըսէ, «Ասոր համար սիրտըս ուրախ եղաւ ու փառքս բերկրեցաւ»: Բայց առաքեալը նոյն խօսքը յառաջ բերած ատենը կ'ըսէ թէ Գաւթի կ'ըսէ, «Ասոր համար ուրախ եղաւ իմ սիրտս, ու իմ լեզուս ցընձաց»: Սաղ. ԺԶ. Գ, Գար. Բ. 26: Ուրեմն լեզուն, խօսելու այն կարողութիւնը որ կը զատէ մարդը անբան կենդանիներէն որ կը կորսուին, մարդուս փառքն է: Բայց դարձեալ Յա-

կորոս ու ծծումբով վառած լիճին մէջը պիտի ըլլայ: Սարող, նախատող և ստող լեզուն աւելի անէճք է քան օրհնութիւն: Աստուած մեզի սուած է լեզուն որպէս զի իրեն փառաբանութիւն երգենք և իր բարութիւնը պատմենք, և ուրիշներու սորվեցնենք ինչ որ ուղիղ է և ճշմարիտ: Աղօթենք որ Աստուած մաքրէ մեր սիրտերը, սանձէ մեր լեզուները: Այն ատեն կրնանք ըսել, «Իմ լեզուս քու արդարութիւնդ պիտի խօսի, ու ամէն օր քու գոպով լիւնդ»: Սաղ. ԼԷ. 28:



ՁԻՆԱՓԱՅԼ ԲՈՒ

Այս թռչունը կը գտնուի Եւրոպայի և Արևելքի որ Սկոտլանդի հիւսիսային կողմը կ'իյնան: Մեծ թռչուն մըն է խոշոր ոսկեղոյն աչքերով և ձիւնի պէս ճերմակ փետուրներով: Չափերը ախարհ կու գան իրենց ամէն կողմը թուխ սև և գորշ պիսակներով: Բայց իրենց փետուրները տարուէ տարի ճերմակի կողմ կը դառնան մինչև որ բոլորովին կը ճերմակին, ձիւնով ծածկուած բլուրներուն պէս որոնց մէջ կը բնակին: Կ'ըսուի թէ ձիւնափայլ բուն դարէ մը աւելի կ'ապրի: Կը կերակրուի նապաստակներով, անէտներով և ուրիշ մանր կենդանիներով զորոնք կը

առաքեալ կ'ըսէ թէ «լեզուն մարդոց մէկը չկրնար նուաճել», թէ «անիկա անգուսպ չար է, ու մահաբեր թոյնով լեցուն», թէ «բնութեան շրջանը կը բռնկեցնէ, ու ինքը գեհեանէն կը բռնկի»: Յակ. Գ.:

Մեզմէ ամէն մէկը լեզու մը ունի: Կրնայ «ստախօս լեզու» մը ըլլալ այն, խաբերայ լեզու, ինչպէս են «գորաւոր մարդուն սուր նետերը ու գիհիին կայծերը», որ կը ծակեն և կ'այրեն: Անիկա կրնայ ըլլալ «ստախօս լեզու» մը, կրնայ ըլլալ թուրի մը պէս սուր լեզու մը, կամ կրնայ ըլլալ լեզու մը որ կը խօսի ամէն օր Սատուծոյ արդարութիւնը: Սաղ. ՀՊ. 24:

Ստախօս լեզու ունենալը երբեք լեզու չունենալէն գէշ է, վասն զի «բոլոր ստախօսներուն բաժինը կրակով

բռնէ գիշերը: Գարնան կ'երթայ Արջային սահմանները ուր կ'անցնէ առաւել և աշնան կը վերադառնայ Եւրոպայի կողմերը: Անոնք որ Լոնտոնի կենդանաբանական Պարտէզները կ'այցեցեն, հաւանօրէն այս թռչուններէն հատ մը կամ աւելի պիտի տեսնեն հոն: Բայց եթէ մենք ոմանք պիտի տեսնեն զայն, չենք կարծեր թէ պիտի տեսնեն անոր բնագաւառին մէջ:

ԱՆԱԲԵՅՄԱԼ ԲՈՒՇԿ ՄԸ

Վայրենիներուն մէջ բժիշկները իրենց ապրուստը կը ճարեն ուրիշները վախճնելով և ապշեցնելով: Բայց երբ այնպիսիներու կը հանդիպին որոնք իրենց գիտցածէն աւելի գիտեն, այն ատեն իրենք կը վախնան: Սէմուէլ Թ. Բլարը հետեւեալ կը

պատմէ նշանաւոր Ամերիկացի գիտնականի մը վրայ, որ ատենով իսպաղականի եղբրքի վայրենիներու գեղ մը այցելած էր:

«Ժամանակ մը անոնց քով կեցաւ, և գրաւեց բոլոր բնակիչներուն համարումը բաց ի անոնց բժիշկէն: Վարպետութիւն բանեցնելով վախնալ կեղծեց, և բոլորովին զգուշացաւ այդ տղթորին հետ ունէ յարաբերութեան մտնելէ: Եւ սակայն վերջապէս որ մը այնպէս պատահեցաւ որ իրաւում հետ տեսնուեցան անոնք: Նստան և իրարու վրայ նայեցան ամբողջ ժամ մը մինչ ծխախոտ կը քաշէին, բայց բաւ մը չխօսեցան: Երկրորդ ժամն ալ նստան, ծխեցին, բայց նորէն չխօսեցան երբեք: Երբ երրորդ

տեղ մը շինել, այսինքն հերձաքարի հանքի մը եղբրքին վրայ, և հանքին այնքան մօտ, որ երբ ժայռը պայթեցուցին, հերձաքարի կտոր մը թռչելով շատ վախցուց և անհանգիստ ըրաւ խեղճ թռչունը: Տորդիկը (արե՞՞՞ Գուշ) չփոխեց սակայն իր դիրքը, բայց դիտող թռչուն մը ըլլալով, նկատեց որ երբ զանգակ մը զարնուէր, մարդիկ կ'ելլէին կը փախչէին: «Ա՛հ», յայտնապէս մտածեց թռչունը, «ե՛ս ալ կը փախչիմ»:» Ուստի երբ յաջորդ անգամուն պայթում պիտի ըլլար, և զանգակը զարնուեցաւ իմացներու համար մարդոց թէ պէտք է փախչիլ, տորդիկն ալ փախաւ իր բոյնէն և մարդոց քովերը կեցաւ: Երբ պայթումը վերջա-

հանդարտ կը նստէր և կը վերցնէր գլուխը, իբր թէ ըսելով, «Ո՛չ, բարեկամներս, ա՛լ չեմ խաբուիր: Բոյնիս մէջ անցուցած կեանքս այնքան կարեւոր է, որ պէտք չէ հետը խաղալ ձեր զուարճութեանը համար: Ա՛լ դիւրահաւան չեմ: Կը տեսնեմ ձեզ:»

ԻՐ ՄԱՆՈՒԿԸ ԵՄԼԿԱԾ ՀՆՌԻԿ ԿԻՆԸ
Ամերիկեան վայրենի Հնդիկ կիները պատկերին մէջ տեսնուածին պէս կը կըրեն իրենց մանուկները: Պզտիկը տախտակի կը կապուի նախ մորթով կամ ուրիշ հանդերձներով փաթթուելէ ետքը: Այս տախտակին վրայ կը պառկի նա վրանին մէջ այնքան երջանիկ որքան քաղաքակիրթ ընտանիքի մը տղեկը իր անկողինին կամ օրորոցին մէջ: Մանուկին զլխուն վրայ կայ կամարած և փայտ մը որուն կեղբունէն կը կախուի խաղալիկ մը տղան զբօսցընելու համար: Երբ մայրը ուզէ մանուկը տանիլ, իր կունակը կը կապէ զանիկա այս տեսնուած կերպովը:

ՇՈՂԵԿԱՌՔԻՆ ՀՆԱՐԻՉԸ

Գրեթէ հարիւր տարի առաջ տանըութ տարեկան խոշոր, պիւսակոտ երեսով տղեկ տղայ մը կոչաւ հանդերձներ հագած, ոտքերն առանց կօշիկներու կամ գուլպաներու, համեստաբար խնդրեց հիւսիսային Անգլիոյ մէկ գեղին դպրոցի վարժապետէն որ արտօնութիւն տայ իրեն իր երեկոցեան դպրոցն յաճախել: Երբ վարժապետը հարցուփորձ ըրաւ անոր, ըսաւ թէ ինք կարդալ գրել սորվիլ կ'ուզէ: Վարժապետը նայեցաւ տղին պարզ դէմքին և կոչաւ հանդերձներուն վրայ և արհամարհանքով ըսաւ, «Ե՛ստ աղէկ, կրնաս գալ, բայց քեզի պէս կոչաւ կերպարանքով, բուսիկ ոտքով պատանի մը աւելի աղէկ կ'ըլլայ որ ուրիշ բան մը սորվի քան կարդալ գրել:» Յետոյ դուռը գոցեց տղին երեսին:

Բայց այս մերժումը չփոխեց տղին որոշումը: Իր աղքատիկ տղայ մը ըլլալը և իր բոլոր կեանքին մէջ սաստիկ աշխատութեան դատապարտուած ըլլալը ժամանակ թողուցած չէին ուսման: Սակայն ինք շատ հաստատաւ միտ տղայ մըն էր: Անկէ առաջ, թէ պէտ չէր կրնար կարդալ, իր պատեհութիւնները շատ աղէկ գործածած էր: Ա՛ծխահանքի մը մէջ մեքենայ կառավարելու գործն ունէր, ուստի այդ առթիւ կատարելապէս



ժամը վերջացաւ, ճերմակ տղթորին «Ի՛նչը մարեցաւ: Սա ոսպնած և ապակի մը հանելով իր գրպանէն, արեւուն շառաւիղները ամփոփեց «Ի՛նչն վրայ որ կամաց կամաց սկսաւ նորէն վառիլ և առատ ծուխ արձակել: Ասոր վրայ վայրենի բժիշկը, որ աչքերը տնկած կը նայէր բոլոր անցած դարձածին վրայ, գետինը ձգեց իր ծխափայտը, ձեռքերը երկինք բարձրացուց, սարսափի աղաղակ մը փրցուց և աճապարելով հեռացաւ:»

Գտած էր մարդ մը որ իրմէ աւելի մեծ բաներ ընելու կարող էր, և փախաւ սարսափելով անոր ներկայութենէն:

ԻՄԱՍՏՈՒՆ ԹՈՉՈՒՆ ՄԸ

Անգամ մը լսեցինք թռչունի մը վրայ որ ուզեց իր բոյնը տարօրինակ

ցաւ, նորէն բոյնը դարձաւ, և մարդիկ իրենց գործին:

Թռչունն այսպէս կ'ընէր ե՛րբ որ պայթում ըլլար: Հարկաւ մեծ զբօսանք էր այս բանը մարդոց, և որովհետեւ այցելուներուն կը պատմուէր անոր զգայուն և հեռատես ընթացքը, անոնք կը փափաքէին տեսնել թռչունը: Հերձաքարը չէր կրնար պայթեցուիլ ամէն ատեն, որ այցելուները գո՛հ ըլլային յագենալով իրենց հետաքրքրութիւնը, բայց զանգակը զարնելը դիւրին էր, և ուստի կը զարնէին: Թռչունը կը լսէր անոր ձայնը, և կը թռչէր կ'երթար: Քիչ մը ատեն անցնելէն ետքը տեսաւ որ կը խաբէին զինքը. ուստի երբ զանգակը նորէն կը զարնուէր, բոյնէն կը նայէր թէ մարդիկ իրենց տեղերէն կը շարժէին: Երբ տեսնէր թէ չէին շարժեր,

հասկացած էր անոր սկզբունքները: Կրնար մեքենան բողբոլվին քակել, նորոգել և կտորները դարձեալ իրար բերել:

Երեկոյեան դպրոցն յաճախելով երկու տարուան մէջ սորվեցաւ ամէն ինչ որ կրնար սորվեցնել գեղին վարժապետը: Այնուհետև սկսաւ առանձին սորվել, ցերեկը սաստիկ աշխատելով և գիշերն ուսանելով: Ճարտարագիտութեան և մաթեմատիքի վերաբերեալ գիրքեր գնեց և քաջ սորվեցաւ անոնց պարունակածները: Սկսաւ փորձարկութիւններու, վասն զի կը տեսներ թէ գործածուածներէն աւելի աղէկ մեքենաներ կարելի էր շինել:

Ինչ եղաւ արդիւնքը: Հնարեց առաջին վայրաշարժը, այսինքն՝ շոգեկառքը, և զարգացուց զայն: Երեսունը հինգ տարեկան եղած ժամանակը քանի մը հաս շինած էր ճամբորդութեան յատկացած այդ շոգեշարժ կառքերէն: Բայց ասոնցմով գոհ չեղաւ: Ուզեց հնարել այնպիսի բան մը որ աւելցնէր անոնց արագաշարժութիւնը: Առաջադրեց շինել ժամը ամաներկու մղոն վազող մը: Ամէն մարդ խնդաց վրան: Ոմանք խորհեցան թէ կը խելագարէր: Ոչ ոք կը հաւատար թէ նա կրնար գործադրել իր առաջադրածը: Բայց յաջողեցաւ շինել վայրաշարժ մը որ ժամը տասնըչորս մղոն կը վազէր: Աւելի վերջերք շինեց «Բոքէթ»ը որ ժամը երեսուն մղոն կ'առնէր:

Մարդիկ այլ ևս չէին խնդար անոր վրայ, ընդհակառակն սկսան բարձրաձայն գոփել զանիկա: Ինք օտար երկիրներ հրաւիրուեցաւ, և հարստութիւնը կը հոսէր իր վրայ: Ծանրաբեռնեցաւ պատիւներով: Այսպիսի է ճորճ Սիմֆոնիստի պատմութիւնը:

ՃԵՄԱՐԻՏ ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԱԳԻԼԻ ՄԸ ՎՐԱՅ

Մեր Աստուծո Բարեկամները հանդէսին մէկ յօգուածագիրը հետաքրքրական պատմութիւն մը կ'ընէ արագիլի մը վրայ որ իր բոցը շինած էր տան մը երդիքին վրայ հիւսիսային Գերմանիոյ մէջ, և որ տան տղոց շատ սիրելի ըլլալուն պատճառաւ մեծապէս ընտանեցաւ և ընկեր եղաւ անոնց:

Յուրա եղանակին գալու առաջին նշանները տեսնուելուն պէս՝ արագիլը պատրաստուեցաւ աւելի տաք երկիրներ երթալու: Տղաքը ցաւեցան մտածելով թէ պիտի կորսնցնէին իրենց

բարեկամը, բայց ծնողները մխիթարեցին զանոնք ըսելով թէ թուշուր անչուշա նորէն պիտի գայ յաջորդ գարունին: Տղաքը տակաւին անհանգիստ ըլլալով սա մտածութեամբ թէ արագիլը պիտի շինամուէր երկայն ձմեռուան միջոցին, իրարու հետ խորհրդակցեցան և փայլուն գաղափար մը ունեցան, զոր անմիջապէս ձեռք գարկին գործադրել: Փոքրիկ տուն մը գրեցին իրենց Գերմաներէն ամենէն աղէկ գիրերով, որուն մէջ կ'ըսէին թէ այդ արագիլը շատ սիրելի էր իրենց, և կը խնդրէին այն բարի անձերէն որոնց երկրին մէջ պիտի անցընէր նա ձմեռը, որ քաղցրութեամբ վարուին իրենց բարեկամին հետ և նորէն ետ դրկեն զանիկա գարունին:

Կնքեցին տունը, ժապաւէնի մը ծայրը հաստատեցին և ժապաւէնը կապեցին թուշուրին պարանոցը և տոմար հրեցին անոր թևին ներքև: Հետեւեալ օրը ցաւով տեսան որ արագիլը թռաւ գնաց դէպ ի աւելի մեղմ եղանակ ունեցող երկիրներ: Չինք և սառը եկան, Ենիդեան տունը տղոց բերաւ նուէրներ և նոր նոր խաղալիքներ, բայց անոնց ամառուան բարեկամը չմոռցուեցաւ: Երբ գարունն եկաւ նորէն, փոքրիկները իրենց սովորութեանը պէս դարձեալ տանիքը կ'ելլէին և ամէն օր արագիլին նորէն դառնալուն կը սպասէին մեծ փափաքով: և ահա պայծառ առաւօտ մը թուշուրը հասաւ, նոյնպէս ընտանի և հեղ:

Տղոց բերկրութիւնը մեծ էր, բայց ինչպէս զարմացան, երբ անոր պարանոցը և թևին տակը գտան ուրիշ պայծառ գոյնով ժապաւէն մը և աւար կցուած տուն մը որ ուղղուած էր «արագիլին բերած նամակը գրող տղոց»: Ժապաւէնը շուտով քակուեցաւ և տունը բացուեցաւ: Ափրիկէ գտնուող միտինարէ մըն էր. որ կը գրէր թէ կարգացած էր տղոց տունը և հոգ տարած էր արագիլին, և մտածած էր թէ այդ տղաքը որոնց բարի սիրտերը մղած էին գիրենք հոգ տանիլ թուշուրի մը ձմեռ ատեն հանգիստ ըլլալուն, պիտի ուզէին հանդերձներ և ուտելիքներ զրկել իր գաստիարակութեան յանձնուած Ափրիկեցի չքաւոր և աղքատիկ մանչերուն և աղջիկներուն: Միտինարը տունին ներքև գրած էր իր ամբողջ անունը և հասցէն: Գերմանացի տղաքը կարեկցութիւնով լեցուեցան, և միտինարին տունը նպաստաւոր պա-

տասխան մը ընդունեց այն ընտանիքէն: Ուրիշ նամակներ ալ երկու կողմէն եկան գացին թղթատարով, կինչև որ տղաք հետզհետէ սորվեցան ճանչնալ միտինարը և անոր փոքրիկ սեւամորթ աշակերտները գրեթէ այնքան՝ որքան կը ճանչնային սիրելի առագիլը, որ այնպիսի փտասհելի պատգամաւոր մը եղած էր:

ՍԻՐՈՒԱՄ ԲԱՅՑ ՎՏԱՆԳԱՒՈՐ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԸ

Կան բաներ որոնք այնքան վտանգաւոր են որ չեն կրնար սիրուիլ: Կը պատմուի թէ մարդ մը Պիւթոն կոչուած օձ մը ունէր տասնըհինգ ուռք երկայնութեամբ, և իր վաճառատան մէջ կը պահէր զայն առնէսները հալածելու համար: Թող կը տրուէր որ օձը վաճառատան մէջ ուզած կողմը սողայ պտտի, իսկ գործաւորները ընտանեբար կը վարուէին անոր հետ, վասն զի կատարելապէս անփնաս կ'երևնար և շան մը պէս հլու էր: Կորնային իրենց ձեռքերով չչոյլ զանիկա և գուարճանալ անոր հետ, և մինչև անգամ կը համարձակէին ներել զայն: Բայց առաւօտ մը վաճառատան գործաւորները ճիշ մը լսեցին, և երբ նայեցան, ահա հոն աշխատող Գերմանացի տղան տակաւի մը վրայ կը կենար, և օձը իր գալարուածները կը քակէր տղին մարմնէն: Տղան խաղցած էր օձին հետ և ներդած էր զայն: Վերջապէս երբ համարձակած էր անոր պոչին վրայ կոխել, օձը անոր կողորդէն բռնելով երեք անգամ փաթթութեամբ էր անոր բոլորտիքը, զորաւոր կերպով, և գրեթէ անոր մարմնին ամէն մէկ ոսկորը ջախջախած էր:

Գործաւորները շատ զարմացան որ Պիւթոնի նման այնպիսի հեղ կենդանի մը յանկարծ փոխեր է իր բնութիւնը, Բայց պէտք չէր որ զարմանային. օձը ճիշդ իր բնութեան համեմատ վարուեցաւ:

Կան ունակութիւններ, կիրքեր և մեղքեր, որոնք ժամանակ մը մեղմ, հեղ և անփնաս կ'երևան, բայց զգուշութիւն: Սատանան թէպէտ լուսաւոր հրեշտակի կերպարանք առնէ ալ, տակաւին այն հին օձն է ինչ որ էր սկիզբէն: Ծածկուած մեղքը որ կը շոյուի կը փայփայուի, վերջապէս պիտի արձակուի, վրէժ լուծէ և կորսընցնէ: Գինիին բաժակը թէպէտ այսօր կը փայլի և կը խաղայ, «ետքը օձի պէս կը խաժնէ, ու քարբի պէս կը խայթէ»:

Ամերիկայի Արտիստիկ Կրթական Կրթիչ Տնօրէն Կ. ՊԱՐՆԸՄ Ֆինանսական Կազմակերպութեան Խան



Կ. ՊԱՐՆԸՄ

180 ՊԱՐՆԸՄ Ե. ՏԵՂՈՐ ԳՈՍԼԱՆԻԱ